

Պուշ տիւ Ռօն նահանգները . իսկ քիչ ունեցողները՝ Սէն , Տօթ-Մլթ , Վօրս , Տօթ-Վիլհէնէ , Տօթ-Սան ու Սարն նահանգները : Սէն նահանգը երկու անկելանոցաց տեսչութիւն միայն ունի . բայց ասոնցմէ մէկը՝ որ է ըսել Փարիզու նը , այնպէս մեծ է ու եկամուտը այնպէս առատ , ինչպէս նաև մէջի աղքատաց թիւը այնչափ շատ՝ որ կրնանք ըսել թէ հինգ աղքատանոցի տեղ կը բռնէ :

1800էն մինչև 1844 աղքատաց սրն տուկին յայտնապէս ընծայ տրուած ու կտակով թողուած ստակը 122 միլիոն Ֆրանքի կը հասնէր , դուրս թողլով առանձին ու մանր մունր տրուած ողորմութիւնները : Ինկելանոցաց ու հիւրանոցներուն շահի դրած բաներուն գինը 500 միլիոնի կը հասնի . ասոնցմէ զատ շատ մը տարեկան եկամուտ առնելիքներ ունին առանձնական մարդիկներէն . շատ մը գլուխ՝ Վթութեան լեռն ըսուած տեղերուն վրայ պառկեցուցած , թաղերէն ժողովուած նպաստներ , տեսարաններու վրայ ունեցած աղքատաց իրաւունքը , աղքատանոցներու և հիւրանոցաց մէջ եղած աշխատութիւններէն եկած ստակը , և այլն : Ուստի բոլոր Վաղղիոյ մէջ եղած հիւրանոցներու ու անկելանոցներու տարեկան եկամուտն է 54 միլիոն , 116,660 Ֆրանք :

Եւս անկելանոցաց տեսչութիւններուն մէջէն շատ եկամուտ ունեցողներն են , Փարիզու նը՝ որ տարին 12 միլիոն 690,823 Ֆրանք մուտք ունի . Իոնինը՝ 2 միլիոն 179,990 Ֆր . Ռուանինը՝ 1 միլիոն 136,908 Ֆր . Սարսէյլինը՝ 1 միլիոն 69,257 Ֆր . և այլն և այլն :

Աղքատաց պարէնին համար գացած ծախքն է 22 միլ . 191,141 Ֆր : Վիտելու բան մըն է որ այս ծախքիս 7^ն 3^ը ցորենի ու հացի համար գացած է :

Աղքատանոցներու ու հիւրանոցներու մէջի եղած անկողիններուն թիւը 126,142^ն կը հասնի : Սէն նահանգը միայն 15,353 անկողին ունի : Հիւանդանոցներու մէջի եղած հիւանդաց թիւը 1847^ն , որ կրնայ միջին տարի մը

սեպուիլ , 486,083 էր . հիւրանոցները 77,033 հոգի ընդունեցան . ու 12,087 հոգի իբրև խենթ՝ յիմարանոցները դրուեցան : Ուստի ս և իցէ կերպով ապաստանարան գտնող անձանց թիւը բոլորը մէկտեղ 575,223 հոգի եղած էր :


ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գոմէշ :

Եւս ու գոմէշը աւելի քիչ կը նմանին մէկմէկու կ'ըսէ Պիւֆոն բնապատումը , քան թէ էշը ձիուն : Գոմէշին բնաւորութիւնը աւելի դաժան և աւելի վայրենի է քան եղինը , աւելի զբոլարաւ կը հնազանդի , և աւելի կատաղի է ու ստէպ յանկարծական կը բերէր կը բռնէ . բոլոր իրեն մարմնոյն ձեւը կոպիտ ու տգեղ են : Երայարանքը անախորժ է , նայուածքը կատաղի միանգամայն նաև ապուշ , վիզը ասդիս անդին կը շարժէ , և գրեթէ գլուխը միշտ դէպ 'ի գետին կախած է , ձայնը ահաւի և ցլուն ձայնէն աւելի զօրաւոր է : Սարմնոյն անդամները նիհար են և պոչն ալ լերկ , տեսքը մթազոյն , կերպարանքը սևագոյն , ինչպէս մորթն ու կաշին . գլխաւորաբար եզէն կաշիին սևութեամբը կը տարբերի որն որ բրդին տակէն դիւրաւ կը տեսնուի , շատ լերկ ըլլալուն : Եւելի թանձրամարմին ու աւելի կարճ է քան զեղը , սրունքները աւելի բարձր , գլուխը համեմատաբար շատ աւելի պզտի , եղջիւրները շատ կլոր չեն , սև ու քիչ մը տափկած . ճակտին վրայ ալ թանձր խոպոպիք կը բուսնի . նաև կաշին ալ աւելի կարծր ու աւելի թանձր է քան եզինը . միսը սև ու կաշիի պէս պինդ ըլլալով ոչ միայն ուտելու անախորժ կու գայ , այլ նաև անտանելի հոտ մըն ալ ունի . մատակ գոմէշին կաթն ալ կուլուն կաթին պէս աղէկ չէ :

Գոմէշը բոլոր աշխարհք տարա-



Գուռէ :

Ծուած ըլլալով եզան պէս կը գործածուի . Եւրոպայի , Եսիայի ու Եփրիկէի այլ և այլ կողմերը հերկելու համար ձիէն աւելի կը գործածուի , անկէց աւելի տոկուն և ուժով ըլլալուն . վիզը ու գլուխը անանկ կը շարժէ , որ մարմնոյն ուժը կ'աւելցնէ . և աս կախուած դրբով՝ մարմինը բոլոր ծանրութեամբը առջև կը նետուի , որով շուտ ու աղէկ առաջ կ'երթայ գետնին հերկագործութիւնը . և երբ քթէն երկրթէ օղակ մը անցնես՝ առանց խժանի կը կառավարուի : Եւ գործողութիւնը ընելու համար՝ պէտք է զարնել ու կապկրպել զինքը . ու երբոր կը քակես ու կը թողուս , կը կատղի ու կը մոնչէ , և կ'երթայ գլուխը ասդիս անդին կը զարնէ , որպէս զի սանձը հանէ : Բայց երբոր քթին օղակին սղմելով՝ կաշին պատտտելով օղակը կ'իյնայ՝ բնութիւնը կակըղցած կ'ըլլայ :

Ինչպէս որ արու գոմէշը արօրի դնելու համար բռնութիւն ընելու է , այս

պէս մատակէն ալ կաթը կ'ընելու համար վարպետութիւն պէտք է : Արով հետև բայ իր ձագէն չթողուր որ ուրիշը մօտենայ իր ծիծերուն , պէտք է որ կ'ընողը քովը տանի ձագն ալ , և թէ որ ասիկայ մեռնի , ան ատեն կաշին ուրիշ հորթուկի մը վրան անցուր , որով իրեն ձագին հոտը առնելով մայրական գութը կը խաբուի : Գոմէշի կաթէն , որ սաստիկ մէկահոտ ըլլալով՝ անախորժ կու գայ հոտառութեան , սքանչելի կարագ կը շինուի : Գոմէշին միսը խիստ հասարակ է , բայց Խտալոյ մէջ աղքատաց աղէկ ապրուստ մըն է : Արայի կաշին թէպէտ եզան կաշիէն աւելի հաստ է , բայց խիտ ու պինդ չըլլալուն՝ կօշկակարութեան մէջ չգործածուիր , վասն զի սաստիկ ծանր է ու դիւրաւ ջուր կը ծծէ . բայց իրեն կակղուութեանն ու առաձգութեանը համար ամէն տեղ կը բնտուի . Եւրոպայ ասոր կաշիէն կը շինեն մաղ , աղէկապ , պայուսակ , արկղ , ու տիկ . Եւրպայարի ժողովուրդն

ալ ամաններ կը շինեն . ատենօք ասոր յղկած կաշին կը հագնէին զինուորները ու վահանի տեղ կը բռնէր . իսկ հիմա զինուորաց մախաղին փոկը ասկէ կը շինեն :

Վոմէշին սոսկալի ուժը տեսնելու համար պէտք է երթալ Մերիկայի ընդարձակ դաշտերուն մէջ , և նաև հնդկաստանի ու Ռարէյուսոյ գլխոյ անտառներուն մէջ , ուր որ բարձրութիւնը հինգ ոտք , և երկայնութիւնը ութը ոտք կը հասնի , ասէղ եղջիւրներով , մորթն ալ մթազոյն կարմիր կ'ըլլայ : Ռարէյուսոյ գոմէշը ծերանալով առանձին տեղեր կը փնտրուէ ու կ'երթայ կը քաշուի անտառներուն խորերը . վայ ան մարդուն և կամ կենդանեաց որ իրեն ոտքին ձայնը լսելով չդառնար չփոխեր իր ձամբան . վասն զի անկարելի է ասոր հետ կռուիլ , նետը անոր կարծրացած կաշին չծակեր , սովորական հրացանին գնտակներն ալ ետ կը ցատքեն . բաց ասկէ վերաւորուած գոմէշը աւելի կը կատողի , և առջևէն փախչին ալ աւելի վտանգաւոր է , որուն ընթացքը ոչ ջուրը կ'արգիլէ և ոչ կրակը : Մշատելու մէկ հատիկ միջոցը ծառի մը վրայ ելլելն է , բայց գոմէշին արագութիւնը շատ անգամ ժամանակ չթողուր աս բանին : Ինչ բան որ դիմացը ելլէ՝ գլխովը կը զարնէ ու ջարդուբուրդ կ'ընէ , ու ոտքովը կը մանրէ , և չհեռանար անկէ ինչուան որ ապահով չըլլայ իրեն յաղթութեանը վրայ , հոտուրտալով ու կրկին ու կրկին մեռելին քովը դառնալով : Փիղը միայն ասոր առանձնացած տեղը կրնայ երթալ ու կռուիլ առանց վնաս մը կրելու ասկէ . վասն զի փղին քաջութիւնն ու ուժը անկէ վեր ըլլալով կը յաղթէ անոր :

Եւրոպայի գոմէշները կէս արձակ և կէս գերիի պէս մեծնալով , Մերիկայի դաշտերուն մէջի աս ասաւոր տեսարանները չեն ցուցնուեր մեզի , որ անթիւ բազմութիւնը երկրէ երկիր ձամբայ կ'ընեն , իրենց մէջէն մէկը գլուխ ընտրելով : Բայց նաև Փոնտիսեան լճակին քովերը և Եսոպանայի ծովեզերեայ

դաշտերուն մէջ կը տեսնես աս վայրի կենդանիները որ հազարաւորը մէկ տեղ քանի մը հոգոյ կը հնազանդին , որոնք թեթև ձիերու վրայ հեծած և ձեռքերնին նիզակ բռնած կլոր կլոր կը պտրտին փարախին չորս դին և զիրենք մէջը կը փակեն : Ար զարմանայ մարդերքոր տեսնէ աս վայրենի գազաններուն կռուոյ ատենը՝ որոնց ուժը մարդկային խելքէն վեր է , հովուին ձայնը լսելուն պէս մէկէն 'ի մէկ իրենց վայրենութիւնն ու գազանութիւնը կը մոռնան և կ'ընտանենան :

Վոմէշը հիւսիսային կողմն ալ հարաւային կողման պէս բազմածին է . և սակայն ցուրտ երկիր չիրեր , և կ'երևնայ թէ բարեխառն գօտիներն աւելի լաւ կը յարմարին իրենց քան թէ ուրիշ որ և իցէ աշխարհիս կողմը : Վոմէշը բնութեամբ ուժով ու սակաւակեր ըլլալով , ամէն տեսակ խոտ կ'ուտէ . բայց մասնաւոր բաներ ալ կան որ աւելի խորթելով կ'ուտէ : Խոնաւ ու ձախձախուտ տեղուանք կը սիրէ , ուր որ խոտերը պարարտ ու փափուկ կ'ըլլան , և ուր որ տղմի մէջ թաւալելով կրնայ տղմուտ ջրի մը մէջ իր կարծր ու չոր կաշին կակրղցընել :



ՍԿՁԲՈՒՆՔ ԲՆԱԼՈՒԾՈՒԹԵԱՆ

Դաս Ա . Օրոյ վրայ :

ՄԱՐԴ չկայ որ չգիտնայ թէ օդը ինչ բան է . պզտի տղայն ալ երբ շունչ կառնէ՝ կ'իմանայ որ թոքին մէջ օդ լեցուեցաւ , և երբ կրակին կը փչէ՝ կ'իմանայ որ թոքին մէջի օդը ելաւ՝ վառած ածուխին վրայ գնաց : ()դով է որ տղան վազելու ատեն ախորժ զգացմունք մը և միանգամայն դիմակալութիւն մը կ'իմանայ . անով իրեն վիշապակը վեր կ'ելլէ , նաւերուն առագաստները լեցընելով՝ կը քշէ զանոնք ու կը տանի : Մէն տեղ ամէն բանի մէջ օդ կայ , և մարմնոց վրայ մեծ ազդեցու-